ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ. Ղարաբաղյան հիմնախնդիրը. դեպի ազատություն տանող փշոտ ճանապարհը, *Հռոմ, «Ստուդիո 12» հրատ, 2011, 174 էջ:*
NIKOLAI HOVHANNISYAN. Il problema del Karabakh. *Il faticoso percorso verso la libertà* Roma, “Studio 12”, 2011, 174 p.

Քանի՞ էջ հարկավոր կլինի Լեռնային Ղարաբաղի երկարատև ու արյունալի ողբերգությունն ամփոփելու համար:



*Սահմանամերձ շրջանի այն հիմնահարցը, որը մինչ օրս վշտացնում է հայ ազգին, կարծես անելանելի փակուղի լինի: ՀՀ ԳԱԱ պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանին «Ղարաբաղյան հիմնախնդիրը. դեպի ազատություն տանող փշոտ ճանապարհը» 200 էջից պակաս գիրքն * էլ է բավականացրել, որպեսզի հիմնավոր և արդյունավետ ամփոփի վերոնշյալ տարածաշրջանի բնակիչներին դեպի ինքնորոշում և ազատություն տանող երկար ու ձիգ և վշտալի ուղու պատմությունը:*

Լեռնային Ղարաբաղը կամ Արցախը (հնում այսպես է կոչվել տարածաշրջանը) մի տարածք է՝ ընկած Հայաստանի և Ադրբեջանի միջև այն ժամանակներից ի վեր, երբ հանրապետությունները միացան Խորհրդային Միությանը: ԽՍՀՄ կառավարությունը, իբրև Թուրքիայի հետ մտերմանալու ռազմավարական քայլ, 20-ական թվականներին որոշում կայացրեց Լեռնային Ղարաբաղի շրջանը, որի բնակչության գերակշիռ մասը հայեր էին, մտցնել Ադրբեջանի կազմի մեջ: Բաքվի կառավարության կողմից իրականացրած էթնիկ զտման փորձերից հետո Արցախը բազմիցս փորձեց որոնել հետ ադարձ ուղի դեպի Հայաստան և դեպի անկախություն, ինչը տևեց մինչև ԽՍՀՄ-ի գոյության վերջին տարիները: Պայքարը կարծես նպատակակետին հասավ 80-ականների վերջին և 90-ականների սկզբին՝ շնորհիվ Ադրբեջանի կազմից դուրս գալու բարենպաստ հանրաքվեի, սակայն խորհրդային կառավարության փլուզումը խափանեց հանրաքվեի պաշտոնական ճանաչումը՝ այսպիսով տուրք տալով ադրբեջանական կողմի հուզումներին և զինված բախումներին:

Մենագրության ողջ շարադրանքն իր պարզության մեջ խորը բովանդակություն ունի: Յուրաքանչյուր գլուխն ինքնին Արցախի պատմության առանձնահատուկ

** 2011 թ. սկզբներին Հռոմում հրատարակվեց հայ ականավոր արևելագետ-միջազգայնագետ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, գիտության վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանի «Ղարաբաղյան հիմնախնդի-րը. դեպի ազատություն տանող փշոտ ճանապարհը» մենագրական ուսումնասիրությունը Իտալիայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան, պատմական գիտությունների դոկտոր Ռուբեն Կարապետյանի ամենագործուն մասնակցությամբ և օժանդակությամբ: Իտալերեն տեքստի խմբագիրն է Անտոնիա Արսլանը, որի հուշապատումի հիման վրա իտալական հայտնի կինոռեժիսորներ Տավիանի եղբայրները նկարահանել են «Արտույտների ազարակը» միջազգային լայն ճանաչում ստացած կինոնկարը: Այդ գիրքն անգլերեն հրատարակությունից իտալերեն է թարգմանել տիկին Արսլանի դուստրը՝ Չեչիլիա Վերոնեզեն: Գրքի շնորհանդեսը տեղի ունեցավ այս տարվա մայիսի 25-ին Հռոմում՝ Իտալիայի արտաքին գործերի նախարարության Միջազգային դիվանագիտական ակադեմիայում, որին հրավիրված էր նաև հեղինակը, ապա՝ մայիսի 28-ին Միլանում՝ Իտալիայի հայերի միության կենտրոնատեղում, դարձյալ հայ գիտնականի մասնակցությամբ: Գրքի հրատարակությունը լայն արձագանք գտավ Իտալիայում, որին անդրադարձան իտալացի մասնագետներ, քաղաքագետներ, պատմաբաններ, դիվանագետներ, ինչպես նաև մամուլն ու հեռուստատեսությունը: Գրքի իտալերեն հրատարակության և նրանում քննարկվող հիմնախնդիրների վերաբերյալ միջազգային մեծ հեղինակություն վայելող Իտալիայի «Եվրասիա» աշխարհաքաղաքական և ռազմավարական ուսումնասիրությունների կենտրոնի առաջատար մասնագետ Ջուլիանո Լոնգոն հանդես է եկել գրախոսականով, որը տպագրվել է այդ կենտրոնի հոկտեմբերի պարբերականում: Իտալացի գիտնականի գրախոսականը տպագրվում է ամբողջությամբ (խմբ.):*

փաստերի վերաբերյալ խորը ուսումնասիրություն է: Գիրքը հայկական կողմի դժգոհությունների և դրանց օրինականության մասին փաստացի մանրամասների համապարփակ նկարագրություն է, որը միաժամանակ հիմնավոր պատասխանում է ադրբեջանական կողմի հավակնոտ բոլոր պահանջներին: Աշխատության գլխավոր թեմաներից մեկը իրականում ոչ միայն Բաքվի կառավարության դժգոհությունների անհիմն լինելը բացահայտելն է, այլև Ադրբեջանի՝ իբրև պետության, գոյության պատմական հիմքերը կասկածի տակ դնելը:

Պրոֆ. Հովհաննիսյանի վերլուծությունը սկսվում է տարածաշրջանի պատմական, աշխարհագրական և ազգային-մշակութային հնագույն փաստերից, որպեսզի բացահայտի, որ Արցախը հայերինն է, որքան էլ դա լինի արտաքին որևէ դժգոհության պատճառ: Հիմնվելով վերոհիշյալ նախաբանի վրա՝ հեղինակը գլուխ առ գլուխ դեպքերի զարգացման մասին մանրակրկիտ շարադրանքով հասնում է մինչև 90-ական թվականների պատերազմը և հրադադարը, որը ուժի մեջ է մինչ այսօր, չնայած այն մշտապես խախտվում է:

Գրքի բովանդակության եզրահանգմանը հեղինակը հասնում է տարածաշրջանի կոնֆլիկտից դուրս գալու բազմազան առաջարկությունների երկար, ճշգրիտ և չընդհատվող շղթայի միջոցով, որից հետո եզրափակում է մի վերջաբանով, որով գիտակցվում է Լեռնային Ղարաբաղի ներկայիս կարգավիճակը. պետական մի միավոր, որը հռչակվել է անկախ, ինքնուրույն պետություն և որը դավանում է ժողովրդավարական արժեքներին: Գիրքն առավել արժևորվում է արծարծված թեմայով, որն անարդարացի անտեսվել է mainstream-ի (գլխավոր ուղղության) շատ պատմաբանների կողմից, ինչպես նաև պատմական փաստերի վերակառուցման աննախադեպ ճշգրտությամբ և, ի վերջո, այն ոճով, որով հեղինակը նկարագրում է պատմական փաստերն ու դրանց հիմնավորումները:

Ողջ աշխատությունը, չնայած շարադրանքի չեզոք ոճին, վկայում է բանիմաց և արհեստավարժ պատմաբանի օբյեկտիվության ու գիտական մտքի ուշադրության մասին: Այն թույլ է տալիս արծարծվող թեմայի շուրջ սրտացավ վերաբերմունքով և հույզերով համակել իր ընթերցողին՝ աներևակայելի և աննկուն կարողանալով վերջինիս ներգրավել (հատկապես ամենանշանակալից պահերին)՝ առանց որևէ հուզաարտահայտչական միջոցի դիմելու:

Պրոֆ. Հովհաննիսյանը կենսունակություն է հաղորդում իր հայրենակիցների ազատության ձգտմանը՝ չանտեսելով գիտական վերլուծության մեթոդը, որն իր ուրույն տեղն է գտել վերոնշյալ աշխատության մեջ:

ՋՈՒԼԻԱՆՈ ԼՈՆԳՈ
(Իտալիա)